Բ. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899 170

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Օտարաստանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԾԱՆՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԸ
Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ.

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

… դրամ ղրկել
Հետեւեալ հասցէին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Դրութիւնք ետ չեն տրուիր

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տարին լրանալու վրայ է, կը խնդրենք մեր բաժանորդներէն որ շտապին մեզ հասցնել իրենց բաժնեգինները, նոյնպէս և այն գործակալներէն որոց քով կը գտնուին գանձուած դրամներ, նաեւ աշխատին անյապաղ գանձել. կը կարծենք թէ ամէն ոք կրնայ հասկնալ, որ թերթ մը իր բաժնեգիններով կը շարունակուի. և կը սիրենք յուսալ որ ամէն մի բաժանորդ և գործակալ կը զգայ որ դրամի ամենափոքր յապաղումը մեծ դժուարութիւններու կը մատնէ խմբագրութիւնը։

## ԻՆՉՈՒ ՄԻԱՅՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԱՋ

Մեր հասարակութիւնը մի առանձին բաւականութեամբ է յարգում այն հայ անհատների յիշատակը, որոնք իրենց կենդանի ժամանակ նուիրված են եղել ժողովրդեան ս. և է գործի։ Օրինակ վերցնենք մեր սպանված կամ կախաղան բարձրացած հայ յեղափոխականներին։ Երբ այդ յարգելի և պաշտելի անձնաւորութիւններից մէկը զոհվում է հայրենիքի փրկութեան սեղանի վրա՝ մի հասարակ հրաւէրը բաւական է մեր ժողովրդին հաւաքելու եկեղեցու մէջ ու զգացնել տալու եղած կորստի սուգ լինելը։ Կին, աղջիկ, երիտասարդ և ծեր լսելով զոհված անձնուէր հայի կեանքի փոքրիկ նկարագրութիւնը, նրա կրած անպատմելի տանջանքները՝ յուզվում, լալիս և աղօթում են։ Այն ինչ եթէ այդ պաշտելի անձնուէր հայը կենդանի ժամանակ մտնէր նոյն հասարակութեան մէջ՝ նրանից օգնութիւն խնդրէր այն գործի համար, որի սիրուն նա պատրաստ է զոհաբերելու իր կեանքը՝ նոյն լացող, ղգացող, արտասուող կինը, օրիորդը, և այր մարդը անտարբերութեամբ սիրտը քարացրած, հեգնական ժպիտով միայն բաւականութիւն կըտար հայրենիքի համար չարչարվող ու տանջվող մաքուր հային. իսկ կը գտնուէին և այնպիսի ցած սրտաբաններ, որոնք կսկսէին խծբծել հայրենիքի փրկութեան համար իրանց օգնութեանը դիմող եղբօր նպատակները, միտումները և ամբողջ կեանքը...

* * *

Բայց մի՞թէ այդպէս պէտք է լինի հայ ժողովուրդը. մի՞թէ միայն մահուան, սառած դիակի առջեւ պէտք է յարգէ իր ազատութեան անձնուէր զինուորին, ոչ։

Սպանվող, կախվող, գնդակահար լինող հերոսութիւնից մնացող հայ անձնազոհ յեղափոխականը իր մահի ժամանակ անգամ շատ դժբախտ է. յաճախ իր հետ գերեզման է տանում իրեն արհամարհող, իրեն գործը, որ և ընդհանուրինն է, հայհոյող եղբայրների պատճառած դառնութիւնները։

Շատ անգամ մահուան վերջին րոպէներին, հոգեվարքի մէջ, նրա սիրտը կրծում է և յուսահատեցնող կասկածը — որ իր սիրած ժողովուրդը չը պիտի նուիրվի ազատութեան գործին, և չպիտի ձգտի հասնելու միակ փրկարար նպատակին։

Եւ այդպէ՞ս է ուզում հայ ժողովուրդը ազատութիւն ստանալ, իբր ազատ մարդ ապրել։ Եթէ այդպէս է. շատ սխալ է։ Հայը մինչեւ որ չը վարժվի իրական զոհաբերութեան, մինչեւ որ իր անձնուէր եղբօրը կենդանի ժամանակ չը վստահի, ամեն տեսակ օգնութիւն չը հասցնէ, երբէք չէ կարող ազատ մարդ լինել։ Ազատութիւն սիրողը կը սիրէ և նրա հարազատ զինուորին. ոչ խօսքով, ոչ լացով, ոչ աղօթքով, ոչ նրա մահից յետոյ, այլ նրա կենդանի ժամանակ, իրական զոհողութիւններ անելով, իսկ մահից յետոյ, ընկած քաջի գործը յառաջ մղելով։

ՎԱՐԴՕ

——)·(——

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 3 Հոկտ.

Աչքի լոյսի բաժակները պատրաստեցէք. գինի, մաստիքա, չէրէզ առաջ բերէք... Կայսերական իրատէ մը ի լոյս ընծայուեցաւ Արթին-Օրմանեանի ծրագիրն ու պահանջները լսուեցան և իրականացան... թղթի վրայ։ Գոնէ թղթի վրայ իրականացան, այդ ալ այրուած սրտին մխիթարանք մը չէ՞ մի։

Ու այդ լոկ թուղթի կտորը, այդ արհամարհելի իրատէն իսկ բաւ է Օրմանեանի հրաժարականը ետ առնելու համար։

Դէպքը հետեւեալն է.

Կը յիշէ՞ք անպատճառ որ ձեզ գրած էի թէ՝ արիւնոտ տարեդարձին, օգոստ. 19ին, իրատէ մը ելաւ որով երեք շնորհներ շնորհած էին հայ ազգին։ Կը յիշէք նոյնպէս որ Օրմանեան անձայն հրաժարեալի ծաղրածուները կը խաղար ամիսի մը չափ։ Եւ կը յիշէք նոյնպէս որ Սուլթանը, իր գործիք Արթին փաշայի միջոցաւ, իմացուցած էր խառն ժողովին որ երեք հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմուեր է Հայոց Պատրիարքին պահանջները քննելու համար։

Օրմանեան ազգասէրի մը վառեռանդով (մեղայ Աստուծոյ) չը կրցաւ համբերել մինչեւ յանձնախմբի վերջնական որոշումները. քաջութեամբ սեպտ. 28ին հրաժարագիրը ներկայացուց։ Կարծեմ աս ալ ձեզի յայտնի է գրած թղթակցութիւններէս։

Եւ այսօր այս ծաղրական խաղին լուծումն է որ երեւան կուգայ։

Սուլթանի կառավարութիւնը երբէք չի ուզեր ցուցնել թէ Հայոց Պատրիարքին հրաժարումէն իրեն համար ճնշում մըն է կամ թէ ինքը քիչ մըն ալ «ստիպեալ է զիջանիլ» ժողովրդին հոգեւոր պետին արդարաբար ըրած պահանջներուն — սա երբէք չուզեր ցուցնել։

Ու այսօրուան իրատէն ալ ոչ թէ Օրմանեանի հրաժարականէն ստիպեալ «զիջում» մը կը ներկայացուի, այլ ամիս մը առաջ նշանակուած «քոմիսիոն»ին ազատ որոշումները են որ Սուլթանը վեհանձնաբար հաստատեր և իրատէով «օրէնքի ոյժ» տուեր է։

Իրատէն կը կրէ սեպտ. 29 թուականը։ Արթին փաշան երէկ կամ այսօր պաշտօնապէս հաղորդած պիտի ըլլայ Ազգային ժողովին... իսկ Օրմանեան, որ առածին կոյրին պէս, միայն մէկ աչք մը կուզէր և Աստուած երկուքը միասին տուաւ, փառաւորապէս պիտի ետ առնէ իր հրաժարականը։

Իրաւ է, մինչեւ այժմ դեռ ետ առած չէ, բայց ատոր մէջ հաւաքներու ու համոզումներու այնչափ հաստատ է, որ երէկ Վիեննայի խոշոր թերթի մը թղթակիցը (Թրքին բարեկամ թերթի) իմ ներկայութեամբ հետեւեալը կը գրէր խմբագրութեան. «Արթին փաշան վաղը կայսերական իրատէն պիտի հաղորդէ ազգային ժողովին, և Օրմանեան իր հրաժարականը ետ պիտի առնէ»։

Հայկական գործերուն քիչ մը ծանօթ եւրոպացիներն ալ համոզուած են որ Օրմանեան նորէն պիտի «լզրճէ» Պատրիարքական գահը։

* * *

Եթէ մրոտած թղթի կտորները կրնան էական բարիք մը ծնեցնել, ան ալ տաճիկ հազարերես կառավարութեան գրած թուղթի մը կտորը՝ այն ատեն կրնաք ըսել, որ յիրաւի այն իրատէն քիչ մը խոստումներ կընէ։

Համաձայն այս թուղթի կտորի հետեւեալ կարգադրութիւնները «իբր թէ» պիտի ըլլան.

1. վերջին դէպքերու ատեն հայոց համար հրատարակուած ոստիկանական բացառիկ օրէնքներու ոչնչացում և անոնց գործադրութիւնը միայն «կասկածելիներու նկատմամբ» թէ հոս և թէ գաւառներու մէջ։ Բացառիկ ոստիկանական օրէնքները կը ջնջուին, բայց «կասկածելիներու» վերաբերմամբ կը մնան իրենց ոյժին մէջ...«կասկածելի անձեր» — չէ

որ Թուրքին համար այսօր մէն մի հայ, նոյնիսկ իր լրտես հայը կասկածելի են։ Ուրեմն այս կէտը լոկ խաբեբայութիւն մըն է, ու յանձնաժողովի անդամ Արթին՝ ատոր տակ ստորագրեր է....։ Ծաղրածուներ, խաբեբաներ։

2. Դէպքերու ատեն կործանուած վանքերու, եկեղեցիներու վերշինութիւնը «կառավարութեան օժանդակութիւնով»։

Լաւ հասկցէք. կառավարութիւնը չի վերաշիներ, այլ անոր օժանդակութիւնովը հայերը պիտի վերաշինեն։ Իսկապէս «օժանդակութիւնը» շինութեան իրաւունքը տալու համար առնուելիք կաշառքներէն պիտի ըլլան...։ Ուրեմն աս կէտն ալ ղէրօ մըն է։

3. Կոտորածներու ատեն սպաննուած կամ ֆիդայուած հայ պաշտօնեաներու կամ անոնց ընտանիքներու ՀՇԱՍՆԵՐՈՒ հատուցումը։

Այս կէտն ալ ոչ մէկ իմաստ մը ունի։ Եթէ պաշտօնեաներուն ապառիկ ռոճիկներուն կը վերաբերի, ուսկի՞ց պիտի վճարուի. գանձարանին դատարկութենէն ափ մը պիտի լեցնեն ՀՇԱՍՈՒԱԾՆԵՐՈՒՆ պարապ գրպանները...

4. Եէտի-Գուլէի որբանոցին շինութեան թոյլտուութիւնն է... մե՞ծ, անլսելի շնորհ...

5. 54 բանտարկեալներու ազատութեան շնորհում, իսկ մէկալ 54 անգամ հազարները. փոխանակէն ժողված 54 անմեղներու արձակումը մե՞ծ շնորհ մըն է եղեր։

6. 24 հոգի մահուան դատապարտուածներու պատժի թեթեւացում — ցկեանս բերդարգելութիւն. այլեւս ոչինչ։ Այս է այդ կայսերական անծայր առաձեռնութիւն և շնորհը։

Ու ասոր համար Օրմանեան անպատճառ իր հրաժարականը ետ կառնէ....։

Ո՞վ գիտէ, արդեօք ասիկա Օրման—Արթին—Սուլթան խաղ մը չէ՞ր նորէն.

Ասանկով Օրման և Արթին կուզեն իրենց ընկած վարկերնին բարձրացնել. բայց այդ մարդերը չեն գիտեր որ իրենց դիմակն արդէն պատռուած է և նոյնիսկ իրենց ըրած աղէկութիւնը հայուն համար փուչ կերեւնայ։

ԲԱԺ

---

ՊՈՍԴՈՆ, 21 Սեպտ.

Արեւելեան աղգերու մէջ նախանձը իր ծայրագոյն աստիճանին հասած է. ոմանք ասիկայ ազիտութեան պտուղը կը համարին։ Նոյն երեւոյթը մեր մէջն ալ կը տեսնուի. ամէն ինչ խնամիական հոգիով նկատել, կուսակցական դաւաճանութիւններով լաւին վատ ըսել, գեղեցիկն ու աղնիւն նախատել, ահա մեր ցեղի արդի պատկերը։ Արդեօք տգիտութե՞ն վերագրենք ասիկայ. անտարակոյս տգիտութիւնը իր բաժինը ունի ատոր մէջ, սակայներբ կը տեսնեմ խմբագիրներ, գրագէտներ և ժողովուրդը առաջնորդելու կոչում ունեցող անձնաւորութիւններ ամիկէն և անուսէն աւելի նախանձոտ, կասկելու աստիճան կիրքոտ, ան ատեն միայն մէկ վճիռ կրնամ տալ, նախանձը նկարագրի տկարութեան արդիւնք է և նկարագիրը միջավայրի կրած աղդեցութենէն կը կազմուի։

Բարբարոս բռնակալութեան ճանկերու մէջ եղող մեր աղգակիցներուն մեղադրել չենք կրնար եթէ նախանձոտ ըլլան. սակայն արտասահմանի հայութիւն տարբեր միջավայրի մէջ կապրի և պէտք է որ սովրի փոխել ինչ որ վատ է իր նկարագրի մէջ։

Մանաւանդ մեր խմբագիրները օտարներէն սովրելու մեծ դասեր ունին. բայց ափսոս որ յառաջդիմելու փոխան կը յետադիմեն։

Ասոնք գրելուս առիթ տուաւ Նիւ-Եօրք հրատարակուող «Ձայն Հայրենեաց»ի մէջ երեւցած ժողովի մը նկարագրութիւնը։ Ուէսթ Հոպոքընի մէջ «Հայրենիք»ի խմբագիր Պ. Զարշաֆեանի ջանքերով լարան մը բացուեցաւ անցեալ տարի. ամառուան արձակուրդէն վերջ տեղւոյն վարչութիւնը լարանի նոր շրջանի բացման առթիւ կը հրաւիրէ Պ. Զարշաֆեան որ առենախօսէ իրենց։ «Ձայն»ի խմբագրութիւնը լարանի ժողովը կը նկարագրէ յիշելով խօսողներու և երգողներու անունները, ի բաց առեալ Պ. Զ.ի անուն որուն համար «երիտասարդ մը խօսեցաւ» կըսէր։ Առաջին անգամն չէ որ Պ. Զիթճեան կը փորձէ անկարող մէկը ցոյց տալ ժողովրդին այն անհաւը որ իր բոլոր ջանքերը նուիրած է թէ Ուէսթ Հոպոքընի և թէ Նիւ-Եօրքի ու շրջակայից հայերու զարգացմանը։ Երբ «Հայրենիք» հրատարակիլ սկսաւ Պ. Զիթճեան իր թերթի մէջ քանիցս «Նիւ-Եօրք հրատարակուող թերթ մը» կոչեց զայն. նախանձէն չէր ուզեր անոր անունը տալ այժմ ալ անոր խմբագրի անունը չուզեր յիշել։ Ո՛ զաղայամտութի՞ւն, յիմարութեան ինչ աստիճանի կը մղես մարդը....։

* * *

Մանիլայի հերոսը—Ճորճ Տուի—անցեալ շաբթու հասաւ Նիւ-Եօրք։ Երկրի չորս ծայրերէն խանդավառ ամերիկացիներ Նիւ-Եօրք թափեցան բարի գալուստ մաղթելու իրենց պատիւը ու ազդեցութիւնը բարձրացուցողին և աղգայ մէջ իրենց քաղաքականութեան միայն դիրք ուրոյ ծառայակալին։ Շատ պարզ է թէ Մանիլայի յաղթանակէն ի վեր աղգերը սկսեցին բարձր աչք նայիլ ժամանակին ինքիր մէջ կծկուած ամերիկեան աղգին վրայ։ Այս երկրի արտաքին քաղաքականութիւնը ի հիմանց փոխուեցաւ ճիշդ այն օրէն, երբ Տուիի թնդանօթները Մանիլայի ծոցին մէջ կը պարպէր։ Ամերիկացին «դուն գործիդ նայէ» քաղաքականութեան հետեւելով բոլորովին անտարբեր էր արտաքոյ իրեն անցուդարձերուն, իսկ այժմ նոյնիսկ աշխարհակալելու միտումներ ունի։

Ճորճ Տուի համեստ անձնաւորութիւն մըն է, փառամոլ չէ. և իրեն ի պատիւ եղած ցոյցերու և ուրախութեանց մէջ միշտ իր հրամանի տակ ծառայող պաշտօնէից վրայ խօսեցաւ և զանոնք ներկայացուց իրրեւ բուն գործը կատարողներ։

Մաքիս մէջ խորհուրդ մը կը դառնայ երբ այնքան մեծ ուրախութիւններ կը տեսնեմ ի պատիւ ապրող հերոսի մը։ Մենք հայերս ինչո՞ւ մեռնելէ վերջ մէկը կը հերոսացուենք և կը պաշտենք։

Մեր մէջ հերոսը քանի որ ողջ է, անարժէք է, երբ մեռաւ կը սրբանայ։ Արդեօք այս ընթացքով չէ՞ որ փոխանակ բաղձալերելու կը վհատեցուենք։

Մենք քանիներ արդեօք խորհած ենք զէթ ծափահարել, Ճանկիլեան, Մուրատ, Տամատեան, Սրմէն-Կարօն, Սերոբ և շատ մը ուրիշներ, որոնց կատարած գործը, իր պարագաներն ալ մէկտեղ

---

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

---

# ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ

(ԱՆՈՏ, ԹԱԹՈՒԼ)

(Շար. նախորդ թիւին և վերջ)

Հարկաւոր է՞ արդեօք պատմել այն անասելի նեղութիւնները, զրկանքները, տառապանքները, որ կրեցին նրանք ճանապարհին...

Երկար պտտեցին այդ երկու առաքեալները. բաժանեցին դաշնակցութեան ուղարկած նպաստը, ուսումնասիրեցին երկիրը, հաւաքեցին բազմաթիւ տեղեկութիւններ եւ կազմելով գործունէութեան ծրագիրը, դիմեցին անմիջական գործի։ Առաջին եւ գլխաւոր պայմանը զէնք ու զինավարժ մարդիկ ներս մտցնելն էր։ Այդ նպատակով երկուսն էլ անցան Ռուսաստան։ Թաթուլը (այդ անունով էր նա յայտնի Սասունում) ներս մտաւ բաւական մի ստար խմբի գլուխ անցած, ընդհարուում ունեցաւ սահմանապահ զինուորների հետ, որոնք ցիր ու ցան եղան հէնց առաջին յարձակումին. իսկ խումբը, դրօշակը պարզած (Սլիվէնցի տիկին Թօպֆճեանի նուիրած դրօշակը), յաղթական ընթացքով անցնում է հայ գիւղերով։ Գիւղացիք դուրս են թափւում խմբի առաջ. ծերերը օրհնութիւններով, երիտասարդները ցնծական զոչումներով, հարսերը արտասուքով. եւ բոլորն էլ յոյսով ու եռանդով հետեւում են հեռացող խմբին, անկարող լինելով աչքերը նրանից կտրել...

Երջանիկ էր ամբողջ խումբը, երջանիկ էր Թաթուլը...։

* * *

Հոկտեմբեր ամսին Թաթուլը Կարին էր գտնուում։ Կոտորածի ժամանակ նա չկարողացաւ մի առանձին դեր խաղալ։ Յարձակումը այնպէս անակնկալ է լինում եւ զօրքերը այնպիսի արագութեամբ են բռնում փողոցները, որ Թաթուլը փակուած է մնում իր ընկերոջ սենեակի մէջ. (ուր արդէն իբր կասկածելի թաղնուած էր)։ Իր գտնուած փողոցում ոչ մի յարձակում չլինելով, նա ոչինչ էլ չի իմանում այն սարսափների մասին, որ տեղի են ունենում շուկայում եւ քաղաքի միւս մասերում։

Կոտորածները սաստիկ ազդեցին զգայուն Թաթուլի վրայ. մանաւանդ որ նրա բոլոր ծրագիրները տակն ու վրա եղան։ Դաշնակցական խմբերը փոխանակ յարձակողական նպաստաւոր դիրքի մէջ դնելու, ստիպված են լինում միայն պաշտպանել, մաս մաս, գիւղերում ցրուած։ Ճիշդ է, մեծ էր դրանց մատուցած ծառայութիւնը. բազմաթիւ գիւղեր պաշտպանեցան դրանց շնորհիւ, սակայն այդ չէր Թաթուլի ակնկալածը։

Կոտորածից յետոյ նա բաւական երկար ժամանակ մնում է քաղաքի մէջ։ Ցանդգնութեան աստիճանի հասած համարձակութեամբ նա նոյն իսկ օր ցերեկով պտտում է քաղաքի փողոցներով, մխիթարելով, քաջալերելով, եւ իր ձեռքից եկած նպաստները բաշխելով։

96 թի սկիզբներին Թաթուլը դուրս եկաւ քաղաքից, պտտեց գիւղերը, այցելեց իր մարդկանց՝ սրտի գոհունակութեամբ ամէն տեղ նոր արամադրութիւն գտնելով։ Սկսեց նոր աշխատութեան, եւ այդ պատրաստութիւնների մէջ էր՝ երբ 96ի ամառը ձերբակալուեցաւ դժոխքի հետ միասին Բասենի Քէօրրի-Քէօյ գիւղում։ Կառավարիչը սկզբում չգիտէր թէ ո՞ւմ հետ գործ ունի։ Օգտւելով այս հանգամանքից, Թաթուլը իրեն յայտարարեց պարսկաստանցի, բայց շատ չուտով իրականութիւնը յայտնի եղաւ. ամառը մատնուեցաւ Կարնոյ կեդր. կոմիտէի նախկին անդամ այդ ժամանակ բօլիս ոստիկան Տիգրան Գէորգեան կոչուած սողունի ձեռքով։

Ոչ բանտը, ոչ պահապանների բռուցքները, ոչ գաւազանի հարուածները այնպէս չազդեցին Արամի վրայ, որքան նախկին ընկերոջ, նախկին խորհրդակցի ստորաքարշ լրբութիւնը։

Արամին փակեցին բանտում, դատեցին եւ չնայած ձեռք առած միջոցներին, նոյնիսկ Կէրէկեանի կնոջ նպաստաւոր ցուցմունքին, Արամին որպէս քրէական յանցաւորի, դատապարտեցին 15 ամեայ բանտարկութեան։

Սակայն բանտը պիտի ընկճէ՞ր նրան, կաչկանդէր նրա հոգին...

Զանցաւ երկար ժամանակ, յան-

առնելով, Ֆուլի հերոսութենէն շատ բարձր է, անբաղդատելի։

Սովրինք ուրեմն։

ԼԷՕ

---

ԹԱԹԱՐ-ԲԱԶԱՐՃԻՔ, 1 Հոկտ.

«Նարժումի 167 թիւին մէջ կարդացինք, խմբագրութեանդ ուղղեալ տեղէս թղթակցութիւն մը, որուն բացարձակ սխալ պարունակութիւնը ցաւ առթեց, միայն սա պատճառով որ չէինք յուսար այդ տարագրողներուն այդչափ անխորհուրդ և բանէ չի հասկցող ըլլալնին։ Դէթ ի նկատի առնելու էին որ իրենք թաղխորհրդոյ ատենապետ ու ատենադպիր են՝ ու այդպիսի զբաղմունքներ չէր վայլեր ոչ իրենց դիրքին և ոչ ստանձնած պաշտօնին։

«Վայ քեզ քաղաք որ տէրդ մանուկ է»։

«Իրաւունքի մէջ գրած թղթակցութիւնս հերքելու աշխատած ատենին իրենց բերնով կը հաստատեն զայն։ Ես իրաց կացութիւնը ինչ որ էր նոյնը մատնանիշ ըրած էի, ոչ զրպարտութիւն էր գրածս և ոչ թշնամութիւն. իսկ իրենց գրածներէն այնպէս կերևի թէ կարդացածնին լաւ չեն հասկցած և կամ տնօրէն էֆէնտին իր ուղած կերպով հասկցուցած է անոնց։ Ստութիւնը ծայր աստիճանին հասուցած են ըսելով թէ «աւելի ճիշդ չէ՞ր ըսել որ ես 10 ֆրանք ինքնայօժար աղգային տուրք գրուեցայ, քանիցս ուզեցին ի՛նչ ի՛նչ առարկութիւններով չվճարեցի»։ պարոննե՛ր կերևի որ դուք իրարմէ խապար չունիք. ահա առաջին ապացոյց գրած թղթակցութեանս ճշմարտութեան։

Վերոյիշեալ 10 ֆրանքի ընկալագիրը «Իրաւունքի խմբագրութեան գրկած եմ արդէն, այս գրութեանս մէկ պատճէնով հանդերձ։

1899 Ապրիլ ամսոյն Պ. Դիոնէս Գէորգեանի սրճարանը ի ներկայութեան եշաժիշտ դասատուին 10 ֆրանք աղգային տուրք 1899 թուականի համար խոստացայ և խնդրեցի Պ. Գէորգեանէն որ իմ հաշուոյս համար վճարէ. նոյն վայրկենին տուաւ դանձապետ Խաչիկ ագա Մանավեանի, որուն փոխարէն ստացայ «Իրաւունքի գրկած ընկալագիրս, որն որ եթէ ուզէք կրնաք տեսնել և հասկնալ թէ զրպարտիչը ե՞ս եմ թէ այդ թղթակցութիւնը գրող և ստորագրող տնօրէն և թաղական էֆէնտիք։

Իբր թէ ես և Պ. Փափազեան հոգաբարձու ըլլալ կուզենք եղեր և ատոր համար ժողովուրդը համոզելու ջանացեր ենք, սակայն բարեբախտաբար չենք յաջողեր. ի շնորհս երեք անդամոց չեղութեան «արդէն ո՞ր բանի մէջ և ո՞ր ժամանակ չեղած չեն եղած որ»։ Հոգաբարձութեան և թաղխորհրդոյ անդամներէն մի քանին ջերմուկները չը գացած քաղաքապետութենէն իրենց պաշտօնական հրաւէր եկած էր, սակայն ատանկ բաները անոնց հաժար նշանակութիւն չունին. նոյն իսկ երեսփոխանական ընտրութեան անդամ չեն մասնակցիր, և պուլկարները սրճարանին մէջ հայերուն երեսին ըսած են թէ, դուք մեզի և մեր կառավարութեան հանդէպ անտարբեր էք։ Ինչ որ ՁԵասակար է մեր աղգային շահերու տեսակէտով։

Տ. Թաղուշ Միրճանեան որ ստորագրած էր այդ նամակին տակ, կրնա՞յ ուրանալ ջերմուկէն ղրրկած իր նամակը Պ. Դիոնէս Գէորգեանի որուն մէջ գրած էր.

«Նասրլ քի էվէլտէն սիզէ սէօյլէմրշիմ, պիզ պուրտա թէքրար արամրզտա զօնուշարագ գարար վէրտիք քի հոգաբարձու իշիւն հիւքիմէթէ զանտիտա կէօսթէրմէլի. սիզի, Միւսիւ Յակոբ Փափազեանը, Միւսիւ Ամբակում Շահրիկեանը, Միւսիւ Արթին Թէքիրտաղլեանը վէ Թաղուշ աղա Մ. Նիկողոսեանը. բէճա իտէրիմ գապուլ իտուպ իճապընա պագասընընզ» ևն. և այլն։

Այդպիսի պաշտօնի մը արդէն յարմարութիւնը չունինք և այդպէս փափաք մը մաքերնուս անգամ անցած չէր. իրենցմէ առաջարկուեցաւ և մենք շնորհակալ ըլլալով հանդերձ վերջնականապէս մերժեցինք։ Իրենք կառավարութեան հրաւէրին չը պատասխանելնուն, նա ստիպուեցաւ առժամանակեայ կերպով նախորդին պաշտօնավարութիւնը ճանչնալ։ Ահա երկրորդ փաստացի սուտ մը որուն տակ կը ստորագրէ ինքը Միրճանեան, և ասկէ այնպէս կը հասկցուի որ, Պ. Յարութիւնեան և Միրճանեան տնօրէն էֆէնտիին գործիք են դարձեր. ես այնպէս կը հաւատամ թէ՝ իրենց ստորագրութիւնը դրած են առանց գիտնալու նամակին պարունակութիւնը. արդէն հայերէն չեն հասկնար, և ով գիտէ ինչ լեզուներ թափեց մեր անղուգական տնօրէնն... Վարդանեան։

Ը՛ր բաւականանալով այս վրան բաց սուտերէն, կուզէ կուսակցական գոյներ ալ տալ մեզի, որուն պատասխանել իսկ չարժեր, որովհետեւ հոս կուսակցական մարդ չկայ։ Եւ կը կարծենք թէ ամօթ չէ յեղափոխական թերթեր կարդալը, և ո՛և է համոզումի տէր կամ գաղափարի մը համակիր ըլլալը, առանց բոլորովին կախաղանը, այն հրապարակի որ ինքը չափչփել է մանկական անհոգ օրերում, պատանեական վաղվուն տարիներում։ Դիմացն է Կարնոյ ժողովուրդը՝ ազգականներ, որոնք աչքի լոյսի պէս պահել, դուրգուրել են իրեն. մանկութեան ընկերներ, որոնց հետ խաղացել, ծեծել, ծեծուել, խոովել, հաշտուել է. երիտասարդներ, որոնք քաղցր օրերի երազներ, միասին անցկացրած անքուն գիշերներ են յիշեցնում...

Անխռով հոգով պատրաստում է նա մահը գրկելու։ Բայց չէ. նա չի պատրաստուում. մահը նա կը գրկի հէնց այնպէս էլ, առանց պատրաստութիւնների... ինք իր ձեռքով պարանը վիզը կանցկացնի... ուրիշ տեղ է նրա ուշ ու միտքը...

Վերջին անգամ է նա շնչում հայրենի օդը. վերջին հայեացքն է նա ձգում իր առաջը բացուած լայն, անհուն, խորհրդաւոր տարածութեան վրայ. վերջին հրաժեշտը պիտի տայ այն ժողովրդին, որին այնքան սիրել է, որի համար այնքան տանջուել է եւ որին նա ձգում հեռանում է այդքան դառը վիճակի մէջ։

Ի՞նչ պիտի լինի...

Նրա ուշադրութիւնը չեն գրաւում ները մարդու մը յանցանք նկատելը ոգիտութեան գլխաւոր մէկ ապացոյցը կը նկատենք։ Մեր տնօրէն էֆէնտին մեր վրայ կարգ մը անտեղի զրպարտութիւններով կուզէ իր քաջագործութիւնները ծածկել։

«Իրաւունքի թիւերը գրպանը սրճարանէ սրճարան, խանութէ խանութ, տունէ տուն երթալով, գրուածները իր ուզածին պէս մեկնեց և գրգռեց միամիտ ժողովուրդը քանի մը կուսակցութեան բաժնելով, որով կուզէ իր խախտած դիրքը ամրացնել։

Ատկէ զատ յաջողեցաւ մի քանի անտեղեակ մարդոցմէ «զօպաճի»ի խումբ մը կազմել, շնորհիւ մի քանի աղաներու համամիտութեան, որոնք ասոր անոր հետ ուրիշ հաշիւներ ունին, կուզեն այս առիթներէն օգտուիլ։

Առաջին փորձը իմ վրաս կատարեցին, թէեւ անյաջող անցաւ. սակայն կը ցաւիմ որ ուրիշ հասարակութեանց առջեւ մեր աղգին պատուոյն առատ բերին։

Բոլոր այս խառնակութիւնները ժողովրդին չի հասկնալէն և երկրորդ մեր տնօրէն էֆէնտիին գրգռող ընթացքէն առաջ եկած է որուն համար շատ կը ցաւինք։

Ա. Շ.

---

Փ. ՊՕԼԻՍ, 4 Հոկտ.

Երեկ հայոց եկեղեցիին մէջ, մեծ բազմութեան ներկայութեամբ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ յեղափոխական գործիչ անմոռանալի Արամ Արամեանի յիշատակին, որ կախուեցաւ Կարինի մէջ։ Ներկայ էր նաեւ Մակեդոնական ընկերութեան տեղական մարմինը մի քանի համակիր պուլկարներու հետ։

Հոգեհանգստեան պաշտօնը կատարեցին Տուլի հերոսութենէն շատ բարձր է, անբաղդատելի։

Սովրինք ուրեմն։

ԼԷՕ

---

ԹԱԹԱՐ-ԲԱԶԱՐՃԻՔ, 1 Հոկտ.

«Նարժումի 167 թիւին մէջ կարդացինք, խմբագրութեանդ ուղղեալ տեղէս թղթակցութիւն մը, որուն բացարձակ սխալ պարունակութիւնը ցաւ առթեց, միայն սա պատճառով որ չէինք յուսար այդ տարագրողներուն այդչափ անխորհուրդ և բանէ չի հասկցող ըլլալնին։ Դէթ ի նկատի առնելու էին որ իրենք թաղխորհրդոյ ատենապետ ու ատենադպիր են՝ ու այդպիսի զբաղմունքներ չէր վայլեր ոչ իրենց դիրքին և ոչ ստանձնած պաշտօնին։

«Վայ քեզ քաղաք որ տէրդ մանուկ է»։

«Իրաւունքի մէջ գրած թղթակցութիւնս հերքելու աշխատած ատենին իրենց բերնով կը հաստատեն զայն։ Ես իրաց կացութիւնը ինչ որ էր նոյնը մատնանիշ ըրած էի, ոչ զրպարտութիւն էր գրածս և ոչ թշնամութիւն. իսկ իրենց գրածներէն այնպէս կերևի թէ կարդացածնին լաւ չեն հասկցած և կամ տնօրէն էֆէնտին իր ուզած կերպով հասկցուցած է անոնց։ Ստութիւնը ծայր աստիճանին հասուցած են ըսելով թէ «աւելի ճիշդ չէ՞ր ըսել որ ես 10 ֆրանք ինքնայօժար աղգային տուրք գրուեցայ, քանիցս ուզեցին ի՛նչ ի՛նչ առարկութիւններով չվճարեցի»։ պարոննե՛ր կերևի որ դուք իրարմէ խապար չունիք. ահա առաջին ապացոյց գրած թղթակցութեանս ճշմարտութեան։

Վերոյիշեալ 10 ֆրանքի ընկալագիրը «Իրաւունքի խմբագրութեան գրկած եմ արդէն, այս գրութեանս մէկ պատճէնով հանդերձ։

1899 Ապրիլ ամսոյն Պ. Դիոնէս Գէորգեանի սրճարանը ի ներկայութեան եշաժիշտ դասատուին 10 ֆրանք աղգային տուրք 1899 թուականի համար խոստացայ և խնդրեցի Պ. Գէորգեանէն որ իմ հաշուոյս համար վճարէ. նոյն վայրկենին տուաւ դանձապետ Խաչիկ ագա Մանավեանի, որուն փոխարէն ստացայ «Իրաւունքի գրկած ընկալագիրս, որն որ եթէ ուզէք կրնաք տեսնել և հասկնալ թէ զրպարտիչը ե՞ս եմ թէ այդ թղթակցութիւնը գրող և ստորագրող տնօրէն և թաղական էֆէնտիք։

Իբր թէ ես և Պ. Փափազեան հոգաբարձու ըլլալ կուզենք եղեր և ատոր համար ժողովուրդը համոզելու ջանացեր ենք, սակայն բարեբախտաբար չենք յաջողեր. ի շնորհս երեք անդամոց չեղութեան «արդէն ո՞ր բանի մէջ և ո՞ր ժամանակ չեղած չեն եղած որ»։ Հոգաբարձութեան և թաղխորհրդոյ անդամներէն մի քանին ջերմուկները չը գացած քաղաքապետութենէն իրենց պաշտօնական հրաւէր եկած էր, սակայն ատանկ բաները անոնց հաժար նշանակութիւն չունին. նոյն իսկ երեսփոխանական ընտրութեան անդամ չեն մասնակցիր, և պուլկարները սրճարանին մէջ հայերուն երեսին ըսած են թէ, դուք մեզի և մեր կառավարութեան հանդէպ անտարբեր էք։ Ինչ որ ՁԵասակար է մեր աղգային շահերու տեսակէտով։

Տ. Թաղուշ Միրճանեան որ ստորագրած էր այդ նամակին տակ, կրնա՞յ ուրանալ ջերմուկէն ղրրկած իր նամակը Պ. Դիոնէս Գէորգեանի որուն մէջ գրած էր.

«Նասրլ քի էվէլտէն սիզէ սէօյլէմրշիմ, պիզ պուրտա թէքրար արամրզտա զօնուշարագ գարար վէրտիք քի հոգաբարձու իշիւն հիւքիմէթէ զանտիտա կէօսթէրմէլի. սիզի, Միւսիւ Յակոբ Փափազեանը, Միւսիւ Ամբակում Շահրիկեանը, Միւսիւ Արթին Թէքիրտաղլեանը վէ Թաղուշ աղա Մ. Նիկողոսեանը. բէճա իտէրիմ գապուլ իտուպ իճապընա պագասընընզ» ևն. և այլն։

Այդպիսի պաշտօնի մը արդէն յարմարութիւնը չունինք և այդպէս փափաք մը մաքերնուս անգամ անցած չէր. իրենցմէ առաջարկուեցաւ և մենք շնորհակալ ըլլալով հանդերձ վերջնականապէս մերժեցինք։ Իրենք կառավարութեան հրաւէրին չը պատասխանելնուն, նա ստիպուեցաւ առժամանակեայ կերպով նախորդին պաշտօնավարութիւնը ճանչնալ։ Ահա երկրորդ փաստացի սուտ մը որուն տակ կը ստորագրէ ինքը Միրճանեան, և ասկէ այնպէս կը հասկցուի որ, Պ. Յարութիւնեան և Միրճանեան տնօրէն էֆէնտիին գործիք են դարձեր. ես այնպէս կը հաւատամ թէ՝ իրենց ստորագրութիւնը դրած են առանց գիտնալու նամակին պարունակութիւնը. արդէն հայերէն չեն հասկնար, և ով գիտէ ինչ լեզուներ թափեց մեր անղուգական տնօրէնն... Վարդանեան։

Ը՛ր բաւականանալով այս վրան բաց սուտերէն, կուզէ կուսակցական գոյներ ալ տալ մեզի, որուն պատասխանել իսկ չարժեր, որովհետեւ հոս կուսակցական մարդ չկայ։ Եւ կը կարծենք թէ ամօթ չէ յեղափոխական թերթեր կարդալը, և ո՛և է համոզումի տէր կամ գաղափարի մը համակիր ըլլալը, առանց բոլորովին կախաղանը, այն հրապարակի որ ինքը չափչփել է մանկական անհոգ օրերում, պատանեական վաղվուն տարիներում։ Դիմացն է Կարնոյ ժողովուրդը՝ ազգականներ, որոնք աչքի լոյսի պէս պահել, դուրգուրել են իրեն. մանկութեան ընկերներ, որոնց հետ խաղացել, ծեծել, ծեծուել, խոովել, հաշտուել է. երիտասարդներ, որոնք քաղցր օրերի երազներ, միասին անցկացրած անքուն գիշերներ են յիշեցնում...

Անխռով հոգով պատրաստում է նա մահը գրկելու։ Բայց չէ. նա չի պատրաստուում. մահը նա կը գրկի հէնց այնպէս էլ, առանց պատրաստութիւնների... ինք իր ձեռքով պարանը վիզը կանցկացնի... ուրիշ տեղ է նրա ուշ ու միտքը...

Վերջին անգամ է նա շնչում հայրենի օդը. վերջին հայեացքն է նա ձգում իր առաջը բացուած լայն, անհուն, խորհրդաւոր տարածութեան վրայ. վերջին հրաժեշտը պիտի տայ այն ժողովրդին, որին այնքան սիրել է, որի համար այնքան տանջուել է եւ որին նա ձգում հեռանում է այդքան դառը վիճակի մէջ։

Ի՞նչ պիտի լինի...

Նրա ուշադրութիւնը չեն գրաւում

---

կարծակի խուզարկութիւնը Արամի խցիկի մէջ երեւան հանեց նամակներ, թերթեր, գաղտնի թանաք... յայտնուեց, որ նա անընդհատ յարաբերութեան մէջ է եղել դրսեցիների հետ, մինչեւ իսկ երիտասարդ թիւրքերի...

Նոր գաղտնութիւնները, նոր ղթայները կարճ ժամանակով միայն կարողացան կարել նրան արտաքին աշխարհից. նախկին յարաբերութիւնները վերսկսեցին...

Արամին լռեցնելու միայն մի միջոց կար՝ կախաղանը, եւ սուլթանը չվարանեց, դրան դիմելու։

Արամը նահատակուեց հազիւ 27 տարեկան հասակում։ Կարճ ապրեց նա, բայց որքա՞ն տպրեց...

* * *

Ամէն անգամ երբ մենք լսում ենք ընկերներից մէկի նահատակութեան լուրը, առաջին հարցը, որ ծագում է իւրաքանչիւրիս գլխում, այն է՝ թէ ի՞նչ տեսակ մահով մեռաւ նա։ Մահի դիմող ամէն մի ընկեր, որքանն էլ իր «ես»ը ամբողջովին զոհած լինի, չի ուզում զրկուել սակայն իր միակ եւ վերջին քմահաճոյքից՝ ընկնել սրի ընտրած եղանակով։

Մեռնելը՝ մեռնելու են, բայց չաւանդեն հոգին անկողնի մէջ, ինչպէս Եգիպտացին. չթաղուին ձիւնի տակ, ինչպէս Աբրօն. չսառչին ցըրտից եւ չունչը տան հրացանի կոթի հարուածների տակ, ինչպէս Աւօն...

Արամը վախենում էր այսպիսի մահերից, նոյնիսկ առաւել, բանտի մէջ մեռնելուց։ Հրացանը ձեռքին, կռիւի մէջ ընկնելն էր նրա բաղձալի վախճանը... Իր բաղձանքին նա չհասաւ, բայց բանտի մէջ էլ չմեռաւ, նա կախաղան բարձրացաւ։

Դո՞հ էր Արամը դրանից... Արամի վերջին բոպէների մասին մեզ քիչ բան է յայտնի։ «Արամեանը մեռաւ կեցցէ՛ յեղափոխութիւն» աղաղակը բերնին, կարդում ենք «Դրօշակ»ի մէջ. իրեն յատուկ հաստատակամութեամբ Արամը կախաղանի առաջ կանգնած խրախուսում է ժողովրդին։ գրում է մեր մի ընկերը։ Այսչափը միայն...

Եւ աւել էլ պէտք չէ. Արամը կախաղանի առաջ խրախուսում է ժողովրդին... միթէ՞ պարզ չէ ամբողջ պատկերը...

Կարնոյ հրապարակի վրայ է Արամի կախաղանը, այն հրապարակի որ ինքը չափչփել է մանկական անհոգ օրերում, պատանեական վաղվուն տարիներում։ Դիմացն է Կարնոյ ժողովուրդը՝ ազգականներ, որոնք աչքի լոյսի պէս պահել, դուրգուրել են իրեն. մանկութեան ընկերներ, որոնց հետ խաղացել, ծեծել, ծեծուել, խոովել, հաշտուել է. երիտասարդներ, որոնք քաղցր օրերի երազներ, միասին անցկացրած անքուն գիշերներ են յիշեցնում...

Անխռով հոգով պատրաստում է նա մահը գրկելու։ Բայց չէ. նա չի պատրաստուում. մահը նա կը գրկի հէնց այնպէս էլ, առանց պատրաստութիւնների... ինք իր ձեռքով պարանը վիզը կանցկացնի... ուրիշ տեղ է նրա ուշ ու միտքը...

Վերջին անգամ է նա շնչում հայրենի օդը. վերջին հայեացքն է նա ձգում իր առաջը բացուած լայն, անհուն, խորհրդաւոր տարածութեան վրայ. վերջին հրաժեշտը պիտի տայ այն ժողովրդին, որին այնքան սիրել է, որի համար այնքան տանջուել է եւ որին նա ձգում հեռանում է այդքան դառը վիճակի մէջ։

Ի՞նչ պիտի լինի...

Նրա ուշադրութիւնը չեն գրաւում արտասուալից աչքերը եւ ոչ դահիճների դէմքերը։ Նա իր վերջին խօսքն է ասում, եւ իր վերջին հայեացքով ուրիշ բան է փնտռում... իսկ վերջին հայեացքը շատ բան է տեսնում... ահա սղմուած բռունցքներ, սղմուած ատամներ, զայրոյթից դողահար դէմքեր... ահա եւ զինակից ընկերներ, գունատ, բայց քաջալերական դէմքով, մօտալուտ տեսակցութեան խոստացող հայեացքով... իսկ բազմութեան գլխին, վերեւում, մօտենում, հեռանում են, բարձրանում, իջնում են Շամիրը, Վարդանը, Պետօն, Աբրօն, Աւօն.....

Արամը վերջացնում է խօսքը։

«Կեցցէ՛ յեղափոխութիւնը» որոտում է յանկարծ նրա ձայնը։ Հաստատ ձեռքով գլուխը անց է կացնում օղակի մէջ, հրում իր տակի աթոռը։

Ամէն ինչ դառնում է իր շուրջը, ամբոխը կորչում է աչքից։ Պետօն, Աբրօն, Աւօն... սպասում են նրան. Արամը նետուում է նրանց գիրկը...

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ

——).(——

տարուած պահուն՝ ողբալի Արամին պսակազարդ լուսանկարը դրուած էր սեղանի առջեւ ։

Արամին մօտէն ծանօթ անձնաւորութիւն մը համառօտ ծանօթութիւն մը տուաւ նահատակի մասին ։

Ժողովուրդը զգածուած ցրուեցաւ ։

* * *

## ՀԵՐՔՈՒՄ

—

«Իրաւունք»ի Սուին, ծանօթութիւնով մը քաշած է իմ անունս իբր թէ հնչիւն ապտակներ հասուցած ըլլամ Պ. Վարդօի ։ Իրողութիւնը բոլորովին խեղաթիւրուած է ։ Մենք լոկ սովորական ընդհարում մը ունեցանք և սրահին ծայրը գտնուող երիտասարդները վրանիս վազեցին մեր ընդհարման առաջն առնելու ։ Ոչ հնչիւն և ոչ «անձայն» ապտակներ տեղի ունեցան ։ Եւ այս ընդհարումը երբեք չի բաղդատուիր Մագմանեանի և Սուինի գործին հետ ։

«Իրաւունք»ի խմբագրութեան ալ ղրկած եմ օրինակ մը ։

Արամ Մանաւեան

Վառնա, 7 Հոկտ.

«Ազգօգուտ» Իրաւունքի արժանաւոր աշխատակից Սուինի «Սուտին» թերթիս մէջ անձամբ պատասխանել արհամարհելով, մի հերքում ուղարկեց «Իրաւունք»ին յայտարարելով որ ինձ չստիպէ տպագրական օրէնքին դիմել ։

Իրաւունքի «գիտնական խմբագիրն» էլ մեզնից օրինակ առնելով երկրորդ օրը ինքն էլ այս պատասխանը ուղարկեց մեզ, որը եթէ չը տպագրէինք, նա ոչինչ չէր կարող ասել մեզ, որովհետեւ Յ. Թ. յօդուածի մէջ եղած մեղադրանքները բոլորովին ուրիշ գոյն ունին. բայց և այնպէս այդ պարոնի «սիրտը» շատ չը կոտրելու համար մենք տպագրում ենք նրա ուղարկած հետեւեալ յօդուածը ։

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շարժումի 168 թիւին մէջ Յ. Թ. ստորագրութեամբ յօդուածի մը մէջ քանի մը անտեղի եւ սխալ ակնարկութիւններ տեսնուեցան որոց մէկ քանին կուզամ ուղղել ։

1. Տեղւոյս Նախնական դատարանի անցեալ տարւոյ մէկ վճիռը իրաւունք տուած է մեզ Շարժումը զրպարտիչ թերթ անուանելու, անշուշտ ընթերցողք կը յիշեն Յ. Զաքրեանի դատը ։ Արդ, այս ածականները արդարացնող ուրիշ պարագաներ հոս բերել աւելորդ է ։

2. Յօդուածագիր Յ. Թ. պարոնը, երբ գիտենք թէ տող մը հայերէն գրելու եւ գրուած մը հասկնալու անկարող է եւ Իրաւունքի ու Շարժումի մէջ կեցած գրական եւ գաղափարական տարբերութիւնը ըմբռնելու անձեռնհաս ըլլալէ զատ, իր մէջտեղ բերած Տրէյֆիւսի ու Զօլայի խնդրոյն ալ անտեղեակ է, իր յօդուածով կապացուցանէ թէ ինք ուրիշի ձեռք գործիք մըն է ։ Ուստի իր ստորագրութեան տակ թափուած հայհոյութիւնները Իրաւունքի յայտնի մէկ քանի երդուեալ թշնամիներուն սեւ ոգիին պատկերներն են, եւ հետեւաբար բոլորովին արհամարհելի ։

3. Դէորգ Հիւրմիւզեան քահանայի մեղապարտ մը ըլլալը, ինչպէս մենք պնդած ենք, նոյնը հաստատեց Պատ. Կրօն. Ժողովն ալ, զանի երեք տարի քահանայագործութենէ զրկելով ։ Ուստի այդ խնդրոյ մէջ Իրաւունք ինչպէս եկեղեցւոյ իրաւունքը պաշտպանած է ։

4. Տեղւոյս ազգային վարժարանի ներկայ դասատուները պաշտօնի կոչուելնէն ի վեր ոչ մի յօդուած չեն գրած Իրաւունքի մէջ. ի բաց առեալ այն կարճ պատասխանները, զորս ստիպեալ էին տալ իրենց անձին դէմ եղած անիրաւ յարձակումներուն ։ Ուստի հրապարակաւ կարող եմ ըսել թէ ազգային վարժարանի արդի ուսուցիչներէ եւ ոչ մին Իրաւունքի չէ աշխատակցած մինչեւ այսօր ։ Աւելորդ թող չի նկատուի նաեւ յայտարարել թէ Իրաւունքի խմբագրութիւնը թերթը շահեկան ընծայելու համար բարոյական, մտաւորական եւ նիւթական ամէն միջոց ունի իր տրամադրութեան տակ, հակառակ Յ. Թ.ի եւ իր նմաններու բարբանջանքին ։

Հաճեցէք ներկայս անփոփոխ հրատարակել Շարժումի ամենամօտ թիւերէ միոյն մէջ ։ (*)

Յ Գ.

Վառնա, 7 Հոկտ. 1899

## ՊԱՏՈՒԵԼԻ ԴԱՍԱՏՈՒԻՆ

—=—

Օհօ՜... պատուելի... քեզ ո՞վ ըսաւ թէ ես քու առաջդ արժէք ունենալ եմ փափաքում... իրաւ արժէքը լաւ է... բայց ո՞րու առաջը... քեզ նմաններո՞ւն, դասատուի դիմակին տակ թաղնուած արարածներո՞ւն... այդ արդէն մեզ պատիւ չբերեր...

Քեզ ո՞վ ըսաւ թէ արժանիքը դրամով կը գնահատուի... պարոն բարձր կարգերու յաւակնոտ դասախօս... չըսէ՞ք գալ տարի եւս զձեզ կիմնազիայի մէջ դասախօսելու հրաւիրեն... հա՛, հա՛, հա՛.... իրաւ լաւ կատակ...

Ինչպէս թէ մութի մէջ չէք... ինչո՞ւ ձեր ստորագրութիւնը չէք գործածեր... դասատու մը... հէ՜... մենք ալ դասատուին այդպէս կը պատասխանենք... դասարանները շատ լոյս են..., բայց մի միայն ձեզ համար... հասկանո՞ւմ էք... շատ լաւ գիտենք թէ ձեր դասարանները բաց են ամենի առջը... բայց լաւ գիտցէք թէ հոն մտնելու համար մենք արդէն ձեր թոյլտուութիւնը առնելու պէտքը չունինք... մենք անձնական կրքերի հետ գործ չունինք. միշտ պիտի հրապարակենք այն արարքները որոնք անվայել են վարժարանի մը համար. իսկ գալով ձեր պատասխաններուն կամ լռելուն, այդ արդէն մեզ համար կարեւորութիւն չունի... մենք ձեզ համար չենք գրում... այլ հասարակութեան, որպէսզի լաւ ընտրութիւն անէ իր մանկտւոյն դաստիարակութեանը համար ։

Վա՜յ կիսի, պատուելի վա՜յ... ամա՜ն... Աստուած խերդ տայ... ակամայ մարդու ծիծաղն ես շարժում... ։

ՖԷՊԻՒՍ

(*) Պ. Զարդար եւ Ֆելէկեան ովքե՞ր են. Թագցնելու ինչ հարկ կայ, քանի որ խնդիրը դպրոցի կը վերաբերի գովասանական գրուածքներ են ։ Դատարանէ վախնալու բան չկայ...

Իսկ, թէ հանդուցեալ Զաքրեանի դատը որքան ծիծաղելի է, ամեն մի խելքը գլխուն մարդ կը հասկնայ ։ Խմբագրութիւնս շատ գոհ է, որ Իրաւունքի խմբագրութիւնը Շարժումի այդպիսի ախոյեան կունենայ. Իրաւունքէն գովուելը շատ աննպաստ կըլլար Շարժումի համար ։ Կը զարմանանք որ Իրաւունքի խմբագրութիւնը Զաքրեանի դատ կըսէ, բայց ոչ ՃԳՆԱՒՈՐԵԱՆԻ ։

Այդ ալ կը հասկնանք...

Ծ. Խ.

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Ֆիլիպէ, Պ. Վահան Մագմանեան.— Ձեր պատասխանի մէջ նկարագրուած Սուին կոչուած արարածի պատկերը անկարող ենք տպագրել մեր թերթի մէջ, մեր ընթերցողների բարոյական զգացմունքները խնայելով ։

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Արամ Արամեանի յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարուած է Սիլիսարէ, Իսլիմիա, Թաթար-Բազարճըգ ։

Ամէն տեղերէ նամակներ կան, որ միայն ագոր կը վերաբերին ։

— Վերջին «Թան»ը Արեւելքի գործերը վերնագրով նախայօդուածի մը մէջ նկարագրելով Սուլթանի հպատակ քրիստոնեաների վիճակը թէ Պալքանեան թերակղզիի վրայ և թէ Ասիոյ մէջ, ցուցունելով կառավարութեան ներքնապէս քայքայման նշանները, և ժողովուրդներու գրգռուած վիճակը, խօսքը մասնաւորելով հայերու վերաբերմամբ, այսպէս կը վերջացնէ.

«Հայկական խնդիրը կրկին սուր կերպարանք առնելու կըսպառնար, սակայն Աբտիւլ Համիտ մեծ ճարպիկութիւնով մէջէն ելաւ ։ Հայոց Պատրիարքը և ազգային ժողովը մէկ անգամէն աւելի տուին իրենց հրաժարականը. ըստ երեւոյթին տագնապը անխուսափելի էր ։ Բայց շուտով իրատէ մը ելաւ վերակրկնելու այն խոստումները, որ հիմնուած են հաստատուն և յատնի խոստովանութիւններու վրայ ։ Շուտով Պատրիարքը իր հրաժարականը ետ առաւ, և ահա համաձայնութիւն կը տիրէ Դուռ-Գաբուի և Ըլտըզի միջեւ ։

Կարելի է որ այս կարգադրութիւն չահաւէտ ըլլայ 54 ազատ հրատարակուած հայերէն մէկ քանի դժբաղդներու, բայց ազգային խնդրոյն ոչ ։ Ասով կարելի չէ ուրանալ որ «Հայկական» խնդիրը, ինչպէս նաեւ Ամբողջ Արեւելեան խնդիրը, նոյն կէտին վրայ կը գտնուի, որուն վրայ թողուած է 95—96ի կոտորածներու միջոցին ։

— Երէկ Բէօստէնճէյէ քաղաքս ժամանեց (Վէսէլլօ) հայկական թատերխումբը, և այս երեկոյ պիտի ներկայացնէ իր առաջին խաղը ։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսկական կառավարութեան խնդրանօք ռուսական քաղաքներու մի գնդապետ Թէհրան պիտի երթայ պարսկական հեծելազօրքը վերակազմելու համար ։

— Գերմանական լրագիրները կը հաղորդեն թէ Անգլօ-Գերմանիան համաձայնութիւնը Սամօա կղզւոյն խնդրի մէջ այն պիտի ըլլայ, որ Անգլիան պիտի ստանայ գլխաւոր կղզիներէն Ուբօլու, իսկ Գերմանիան ուրիշ վարձատրութիւն մը ։

— Թրանսվալ և Անգլիա արդէն սկսած են պատերազմիլ ։ Թրանսվալցիք արդէն քանի մը յաջող, թէեւ փոքրիկ գործեր ըրած են ։

— Բարիզի մէջ քանի մը երիտասարդ Ֆրանսացիներ կը պատրաստուին իբր կամաւոր երթալ Թրանսվալ անոր անկախութիւնը պահպանելու համար կռուելու ։

— Գերման հրապարակագիր բրօֆէսէր մը Լոնտոնի թերթերէն մէկուն թղթակցին հաղորդեր է, որ գերմանները համակիր են Թրանսվալցիներուն. Եւ անգլիոյ Թրանսվալի դէմ բացած պատերազմով. զիրենք կստիպեն Ռուսիոյ մօտենալ ։

— Հարաւային Ափրիկէի անգլիական զօրաց հրամանատարը Պիւլլէր ճամբայ ինկած է իր տեղը ։ Այդ ուղեւորութիւնը շարժառիթ եղած է ազգասիրական մեծ ցոյցի մը ։

— Պոլսէն հոկտ. 3ին Ֆրանսական թերթերուն ղրկած հեռագիր մը կը հաղորդէ որ Մեծ-Եպարքոսին հրաժարականը անխուսափելի է, և Սուլթանը պիտի ընդունի ։ Նոր Եպարքոս պիտի ըլլայ Ջէքի փաշան ։

— Կըսուի թէ Պոլսոյ ֆրանսական դեսպանը Քօնսթան զրահաւորով պիտի երթայ Սուրիա, որովհետեւ Ֆրանսայի ազդեցութիւնը բաւական ժամանակէ ի վեր հոն տկարացած է. և Քօնսթանին ճամբորդութիւնը այդ ազդեցութիւնը զօրացնելու համար է ։

Печатница „Взаимность" Варна.